ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 8 *Общественные науки*

Ռ. Հակոբյան

ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Մեր նախորդ հոդվածում աշխատեցինք ցույց տալ, որ VII—I դարերում (Ն. մ. թ.) Հայկական բարձրավանդակում ավարտվել էր նախնադարյան համայնական և տոհմական կարգերի քայքայման պրոցեսը։ Աշխատանքի հասարակական առաջին, իսկ ավելի ուշ երկրորդ բաժանման հետևանքով անասնապահությունը և արհեստները անջատվել էին երկրագործությունից։ Աշխատանքի հասարակական բաժանումը խթանել էր արտադրության ուժեղացմանը՝ հողագործության, անասնապահության, տնային արհեստների բնագավառներում և նպաստել ներքին ու արտաքին ապրանքափոխանակության զարգացմանը։

Հայկական բարձրավանդակի էկոնոմիկայում տեղի ունեցած արմատական տեղաշարժերը և որակական այս փոփոխությունները ստեղծել էին բոլոր նախադրյալները, որոնց հիման վրա II դարում (Ն. մ. թ.) արդեն ձևավորվել էր հայկական պետականությունը։

Պատմական այդ ժամանակաշրջանը մենք բնութագրել էինք որպես անցման շրջանի, նախաֆեոդալական «բարբարոսական» տիպի պետականության ժամանակաշրջան։

Նախաֆեոդալական «բարբարոսական» տիպի պետություններում իրար կողքի գոյություն ունեին տնտեսական 3 հիմնական՝ նախնադարյան համայնական, ստրկատիրական և նոր ակզբ առնող ու ձևավորվող ֆեոդալական կացութաձևեր (уклады)։

Տոհմական կարգերի քայքայման հետևանքով և նրա հիման վրա հայկական բարձրավանդակում առաջացել էին գյուղական երկրագործական համայնքներ, որոնք հիմնված էին ոչ թե արյունակցական, այլ տերիտորիալ-տնտեսական կապերի վրա։ Գյուղական երկրագործական համայնքները պատմականորեն մի քայլ առաջ էին համեմատած վաղ նախնադարյան համայնքների հետ։[1]

Կ. Մարքսը Զասուլիչին գրած իր նամակներից մեկում հետևյալ կերպ է բնութագրում գյուղական համայնքը.

«Ամենից առաջ, բոլոր ավելի վաղ նախնադարյան համայնքները հիմնված էին իրենց անդամների արյունակցական սերտ կապերի վրա։ Գյուղական համայնքը խղում է այդ կապերը և ավելի ունակ է դառնում ընդլայնվելու և դիմանալու օտարների հետ ունեցած շփմանը։ Այնուհետև,

* Տպվում է մաքերի փոխանակության կարգով։ Խմբ.

1 Տես Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակագիտության բաժանմունքի «Տեղեկագիր», 1947 թ. № 7, էջ 38—57։

գյուղական համայնքում տունը և նրան կցորդները (придаток), բակը հանդիսանում են հողագործի մասնավոր սեփականությունը, մինչդեռ հողագործության հանդես գալուց դեռ շատ առաջ ընդհանուր տունը նախանադարյան համայնքի նյութական հիմքերից մեկն էր։ Վերջապես, թեև վարելահողը դեռ մնում է համայնական սեփականություն, բայց նա պարբերաբար բաժանվում է գյուղական համայնքի անդամների մեջ այնպես, որ յուրաքանչյուր հողագործ իր միջոցներով մշակում է իրեն հատկացված հողակտորը և անձամբ յուրացնում է ստացած արդյունքները, մինչդեռ ավելի հին համայնքներում տնտեսությունը վարվում էր համատեղ—բաշխվում էին միայն մթերքները»։[1]

Գյուղական-երկրագործական համայնքը իր կտրուցվածքով և էությամբ երկակի էր։ Մի կողմից համայնքում դեռ թարմ կերպով պահպանվում էին հանրային սեփականության մնացորդները—վարելահողը, արոտավայրերը, անտառները, ժարդաղետինները, գետերը, լճերը—մյուս կողմից համայնքի յուրաքանչյուր անդամ իր սեփական արտադրական միջոցներով վարում էր յուր անհատական տնտեսությունը։

Այդ երկակիությունը—հանրային և մասնավոր սեփականության առկայությունը—նյութական և սոցիալական այն նախադրյալը հանդիսացավ, որը վերջի վերջո հասցրեց համայնքի քայքայմանը։ Ավելին։ Մասնավոր սեփականության հանդես գալը ստեղծում է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և դասային խիստ շերտավորում համայնքի ներսում։

Խոսելով գյուղական-երկրագործական համայնքների մասին, մենք իրավունք չունենք աչքաթող անելու այն առանձնահատուկ պայմանները, որում ձևավորվեցին և առաջացան գյուղական համայնքներ՝ ինչպես հին Արևելքում, այնպես էլ հին Հայաստանում։

Հին Արևելքում և այդ թվում հին Հայաստանում գյուղական-երկրագործական համայնքները շատ կենսունակ և պահպանողական էին. նրանք տնտեսական և քաղաքական խոշոր ուժ էին հանդիսանում և ոչ միայն արգելակում էին արտադրական նոր ուժերի զարգացմանն, այլև ստրկության աշխատանքի լայն ծավալմանը։

«Այս ինքնաբավ համայնքների արտադրողական պարզ օրգանիզմը,— գրում էր Մարքսը,— որոնք մշտապես վերարտադրվում են միևնույն ձևով և որոնք պատահաբար կործանվելու դեպքում էլ վերականգնվում են միևնույն տեղում, միևնույն անունով, բանալի է տալիս ասիական հասարակությունների անփոփոխության գաղտնիքը լուծելու, անփոփոխություն, որ այնպես ակնբախ հակապատկեր է կազմում ասիական պետությունների մշտական խորտակման ու նորաստեղծման և դինաստիաների անդադար փոփոխվելու հետ համեմատած»։[2]

Մասնավոր սեփականության զարգացմանը զուգահեռ սկսվում է «արտադրության ուժեղացումը բոլոր ճյուղերում—անասնապահություն, հողագործություն, տնային արհեստներ—մարդկային աշխատանքի ուժին հնարավորություն տվեց ավելի մեծ քանակությամբ արդյունքներ արտադրելու, քան այն, ինչ որ պետք էր նրա տպրուստի համար... Աշխա-

[1] Маркс-Энгельс—„Архив", т. I, стр. 277.
[2] Կ. Մարքս—Կապիտալ, հ. I, 1933 թ., 324—325։

տանքի նոր ուժեր մեջ քաշելը ցանկալի բան դարձավ։ Այդ նոր ուժերը մատակարարում էր պատերազմը, ռազմագերիները սկսեցին ստրուկ դարձնել։[1]

Հին Հայաստանի տնտեսական կյանքը և հասարակական հարաբերությունները ուսումնասիրող որոշ մասնագետներ անհաջող փորձեր են կատարում հին Հայաստանում ռազմագերիների առկայությամբ որոշելու հայկական պետականության և առանձնապես ստրկատիրական հասարակական ֆորմացիայի հանդես գալու փաստերը։

Ռազմագերիների առկայությունը, կամ պատերազմները ու առանձին ցեղերի պայքարը չեն ստեղծել և չէին կարող ստեղծել ոչ պետություններ և ոչ էլ առանձին հասարակական ֆորմացիաներ։

Պատերազմների, առանձին ցեղերի պայքարով պետությունների և հասարակական ֆորմացիաների առաջացման մասնակ, ռասայական «տեսությունը» դեռ իր ժամանակին խիստ քննադատության ենթարկեց Ֆ. Ենգելսը իր՝ «Անտի Դյուրինգ» և «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատությունների մեջ։

Ֆ. Ենգելսը—մարդկային հասարակության պատմության գիտական ուսումնասիրության և պատմական անժխտելի փաստերի հիման վրա, ցույց տվեց, որ պատերազմի միջոցով ռազմագերիների (և ոչ թե օժանդակ բանվորական ձեռքերի—ստրուկների) ձեռք բերման մասսայական երևույթը հայտնի էր՝ նաև նախնադարյան համայնական հասարակությանը։

Ցույց ռազմագերիներին ստրկացնելու մասսայական երևույթները սկիզբ են առնում միայն պատմական այն էպոխայում, երբ ստեղծվում են ստրկատիրական հասարակության տնտեսական և սոցիալական նախադրյալները։

Որպեսզի ռազմագերիները ստրկացվեն և գլխավորը՝ ստրկության աշխատանքը դառնա տիրապետող արտադրության եղանակ ամբողջ հասարակության համար, հասարակությունը պետք է հասնի արտադրողական ուժերի, արտադրական հարաբերությունների, հարստության կուտակման և առևտրի ու ապրանքափոխանակության անհամեմատ զարգացման ավելի բարձր աստիճանի, պետք է հրապարակ գան նյութական և սոցիալական ավելի շերտավորված անհավասարություններ և հասարակությունը պետք է կարիք զգա արտադրելու նյութական բարիքների հավելյալ արդյունքները։

Միայն նյութական և սոցիալական անհավասարությունների հետևանքով է, որ նախկին տոհմա-ցեղային պատերազմները կորցնում են իրենց նախնական նշանակությունը և տոհմի կամ ցեղի սեփական տերիտորիան պաշտպանելուց վեր են ածվում հարևանի հարստությունը հափշտակելու և ռազմագերի—ստրուկներ ձեռք բերելու կարևորագույն միջոցի։

Առաջնորդվելով այս սկզբունքներով, աշխատանք ցույց տալ, թե ստրկությունը հին Հայաստանում ինչ տեղ էր գրավում ժողովրդական տնտեսության մեջ և արդյոք նա մեզ մոտ կազմեց առանձին հասարակական ֆորմացիա, թե մնաց իր նախնադարյան-նահապետական ձևերում, գոյության անմիջական միջոցների արտադրության ստադիայում։

---

[1] Ենգելս — Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1940 թ., էջ 195։

Ինչպես բոլոր նախաֆեոդալական «բարբարոսական» տիպի պետություններում, այնպես էլ մեզ մոտ հին Հայաստանում ստրկությունը տարածված և ընդհանուր երևույթ էր։ Որքան մեզ հայտնի է, հին Հայաստանի տնտեսական կյանքը և հասարակական հարաբերությունները ուսումնասիրող և ոչ մի պատմաբան բանասեր չի ժխտել ստրկության առկայությունը և նրա լայն տարածումը հին Հայաստանում։

Բերենք մի քանի օրինակ։

«Ինարկե,—գրում է ակադ. Հ. Մանանդյանը,—խոսք անգամ չի կարող լինել, որ իբր թե հին Հայաստանում գոյություն չեն ունեցել ստրուկներ և որ Հայաստանն այդ տեսակետից բացառիկ մի երկիր է եղել Մերձավոր Արևելքում։ Ստրկությունը համատարած ընդհանուր մի երևույթ էր հին աշխարհում, ուստի և ինքնըստինքյան հասկանալի է, որ բացառություն չէր կարող կազմել նաև հին Հայաստանը։ ... Ստրկությունը հին Հայաստանում չի կարող, անշուշտ, համեմատվել իր ծավալով և իր տնտեսական նշանակությամբ հին Հունաստանի կամ Հռոմի ստրկության հետ, ուր ստրուկները կազմում էին բնակչության ստվար մեծամասնությունը և գլխավոր արտադրող ուժերն էին ոչ միայն արտադրության մեջ, այլ նաև գյուղատնտեսության»։[1]

Հետագայում այս գրույթը ակադ. Հ. Մանանդյանը ավելի պարզ կերպով ձևակերպեց իր խիստ կարևոր և գիտական մեծ արժեք ներկայացնող „Проблема общественного строя доаршакидской Армении“ հոդվածում։

«Այսպիսով, նշրագիծում է իր հոդվածը ակադ. Հ. Մանանդյանը,—նախաարշակունյան հասարակության՝ արտաշեսյան էպոխայի սոցիալական ընդհանուր պատկերը մեզ ներկայանում է չնայած ոչ լրիվ, բայց բավականին որոշակի գծերով։ Այն, ինչպես ճիշտ կերպով նկատել է ակադ. Ս. Դ. Գրեկովը իր վերոհիշյալ հոդվածում, հանդիսանում է անցման շրջանի, տոհմական կարգերից դեպի ֆեոդալիզմը անցման հասարակություն, այսինքն կիսապատրիարխալ կիսաֆեոդալական հասարակություն։[3]

Պրոֆ. Ա. Սամուելյանը իր «Ստրկությունը հին Հայաստանում» ընդարձակ հոդվածում առաջին անգամ մեր պատմագրության մեջ ոչ միայն ցույց տվեց ստրկության աղբյուրները, նրա լայն տարածումը հին Հայաստանում, այլև ստրուկների խաղացած դերը հին Հայաստանի հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում։[4]

Ստրկության առկայությունը և նրա տարածումը հին Հայաստանում հիմք է տվել որոշ պատմաբանների հին Հայաստանը ներկայացնելու, որպես տիպիկ ստրկատիրական հասարակական ֆորմացիա, ֆորմացիա անտիկ ստրկատիրության իմաստով։ Այսպես օրինակ, ակադ. Ստրուվեն իր

---

[1] Ակադ. Հ. Մանանդյան—«Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934 թ., էջ 213, 239—240։

[2] Հ. Մանանդյանը նկատի ունի Ս. Դ. Գրեков-ի հոդվածը— տես «Учительская газета» 29 XII 1940 г.

[3] А. Макандяк— „Проблема общест. строя доаршакидской Армении—„Исторические записки“ № 15, 1945 г., стр 28.

[4] Պրոֆ. Ա. Սամուելյան—«Ստրկությունը հին Հայաստանում» (տես ՀՍՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր» 2-րդ գիրք, 1937 թ., էջ 87—140։ Հմ. նույնի «Հայ հին իրավունքի պատմություն», հատոր 1 ին, 1939 թ., էջ 272—329։

„Проблема зарождения, развития и упадка рабовладельческих обществ древнего Востока“ աշխատության մեջ ոչ միայն Ուրարտուն ու Պարսկաստանը, այլև հին Հայաստանը ներկայացրել է որպես տիպիկ ստրկատիրական պետություն։[1]

Պրոֆ. Լյաշչենկոն իր „История народного хозяйства СССР“ աշխատության մեջ որոշակի գրում է. «Ալ. Մակեդոնացու նախկին կայսրության տրոհման հետևանքով Պարսկաստանի և Միջագետքի հետ միասին Հայաստանի առանձին մասերը կազմեցին Սելևկյան պետություններից մեկը ... Այդ էպոխայում Հայաստանը հանդես է գալիս, որպես տիպիկ ստրկատիրական պետություն։ Թագավորը հանդիսանում է «թագավորական ստրուկների» ձեռքով մշակված խոշոր լատիֆունդիաների ամենամեծ տերը։ Ստրուկների աշխատանքով վարվում էին թագավորական տնտեսության բոլոր ճյուղերը։ Նախկին ցեղական և տոհմական ավագանին հանդես է գալիս որպես հողատեր-ստրկատերերի դասակարգ՝ իր ձեռքում կենտրոնացնելով խոշոր լատիֆունդիաներ և մեծաքանակ ստրուկներ»։[2]

Պրոֆ. Ա. Աբրահամյանը իր «Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի շուրջը» հոդվածում նույնպես հակումն ունի հին Հայաստանը ներկայացնելու, որպես ստրկատիրական հասարակություն։[3] Այս տեսակետը զարգացված է նաև «ՍՍՌՄ-ի պատմության» ԻՈՒՀ-ական դասագրքում։[4]

Հին Հայաստանը ստրկատիրական պետություն ներկայացնող պատմաբան-բանասերները իրենց տեսակետները հաստատելու համար առաջ են քաշում հետևյալ հիմնական դրույթները.

1. Հին Հայաստանում, ինչպես անտիկ բոլոր երկրներում, ստրկությունը տարածված և ընդհանուր երևույթ էր։

2. Նախաարշակունյան Հայաստանի պատմական զարգացումը անցել է այն էտապներով, ինչ որ անտիկ ստրկատիրական երկրները։ Ստրուկները և ստրկական աշխատանքը հին Հայաստանում ունեցել են այն դերն ու նշանակությունը, ինչ որ հին Հունաստանում և Հռոմում։ Հին Հայաստանում ստրուկի աշխատանքը հանդիսացել է արտադրության հիմքը և հասարակությունը իր գոյությունը պաշտպանել է ոչ թե ազատ համայնականի, այլ ստրուկի աշխատանքի միջոցով։

3. Նախաքրիստոնեական Հայաստանում լայն չափով տարածված են եղել ստրկական տիպի տաճարական տնտեսությունները, իսկ քրիստոնեական Հայաստանում ագարակները, դաստակերտները, ձեռնակերտները, որտեղ արտադրության հիմքը կազմել է ստրուկի աշխատանքը։

4. Հին Հայաստանի քաղաքներում և քաղաքատիպ վայրերում ստրկությունը կազմել է բնակչության ստվար մեծամասնությունը։ Գերի ստրուկներին բնակություն են հաստատել քաղաքներում, որտեղ բարձր զարգացման

---

[1] *В. В. Струве*—„Проблема зарождения, развития и упадка рабовладельческих обществ древнего Востока“ (см. Известия ГАИМК, вып. 77, М. Л. 1934 г.

[2] Проф. *П. Лященко*—История народного хозяйства СССР, 1939, стр. 44.

[3] Պրոֆ. Ա. Աբրահամյան—«Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը», տե՛ս ԳԱ «Տեղեկագիր» № 2, 1947 թ., էջ 36—38.

[4] „История СССР“, т. I, Москва, 1947 г., стр 28.

են հասել լատիֆունդիական տիպի, լայն շուկաների հետ կապված, ստրուկի աշխատանքի վրա հիմնված տնտեսությունները։

Քննենք այդ դրույթները առանձին-առանձին։

I

Ստրկությանը տարածված և ընդհանուր երևույթ էր հին Հայաստանում։ Օտար և ազգային աղբյուրները հաստատում են այդ փաստը։ Ինչպես բոլոր երկրներում այնպես էլ հին Հայաստանում ստրկությունը ուներ նույն ընդհանուր աղբյուրները։ Այդ աղբյուրները հետևյալներն են՝

ա) Պատերազմը և գերեվարությունը։ Պատերազմը, պատերազմի միջոցով ռազմագերիներ ձեռք բերելու այդ եղանակը այնքան բնական և անհրաժեշտ է համարվել, որ օրինականացվել է ոչ միայն իրավական, այլև եկեղեցական կտակարաններով և հատուկ կանոններով։ Հին կտակարաններում մենք գտնում ենք բազմաթիվ վկայություններ ոչ միայն ռազմական ավարի այլև պատերազմական գերիների բաշխման կարգի և օրենքների մասին։ Հրեաների և հայերի հին սովորության համաձայն, և՛ ռազմական ավարից, և՛ գերիներից բաժին էր տրվում թագավորներին, իշխաններին, տաճարներին, իսկ հետագայում քրիստոնեական եկեղեցիներին։ Պատերազմական ավարի և գերիների այդ մասնահանումը կոչվում էր հաս։ Ահա այդ կարգի երկու վկայություն.

«Եւ առջիք հաս Տեառն յամենայն ուրանց պատերազմողաց յերթելոց ի պատերազմ ոգի մի ի ենգ հարիւրոց ի մարդոյ և յանասնոյ և յարջառոյ և ոչխարէ և յայծեաց»։[1]

Այստեղ մասնահանումը մարդկանց և անասունների նկատմամբ ունեն նույն հարաբերությունները՝ հինգ հարյուրից մեկը։ Ավելին։ Պատերազմական գերիները իրենց սոցիալական կացությամբ և քաղաքական իրավունքներով ոչ մի բանով չեն տարբերվում անասուններից և հիշատակվում են նրանց հետ միասին։

«Եւ եղև կէս աւարին երթելոյն ի պատերազմ ի թուոյ ոչխարացն երեք հարիւր և երեսուն հազար և եւթն հազար և հինգ հարիւր։ Եւ եղև հասն տեառն յոչխարէ՝ վեց հարիւր և եւթանասուն և հինգ։ Եւ արջառ երեսուն և վեց հազար, և հասն Տեառն եւթանասուն և երկու։ Եւ էշք՝ երեսուն հազար և հինգ հարիւր, և հասն Տեառն վաթսուն և մի։ Եւ ազիմ մարդկանն՝ վեշտասան հազար, և հաս ի նոցանէ Տեառն՝ երեսուն և երկու ազիմ»։[2]

Պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների մասին ընդարձակ վկայություններ կան մեր մատենագիրների մոտ։ Մ. Խորենացին վկայում է, որ երբ Ասորեստանի թագավորի տղա Պակարոսը հոր մահից հետո կատաղի պայքար է մղում գահի թշնամիների դեմ, գալիս է «...զա Բարզափրան Նահապետ Ռըշտունեաց և՝ սպարապետ Հայոց և Պարսից՝ խոստանայ հինգ հարիւր կին գեղեցիկ և հաղար քանքար ոսկւոյ, զի օգնեսցէ նոցա ընկենլով ի թագաւորութենէ Հրէից զՀիւրկանոս, և թագաւորեցուցանել զԱնտիգոնոս»։[3]

[1] Թուոց, ԼԱ, 28 (բոլոր տեղերում ընդգծումները իմն են.—Ս. Հ.)։
[2] Թուոց, Նույն տեղում, էջ 36—42։
[3] Մ. Խորենացի—«Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, էջ 133։

Նույն պատմիչը վկայում է, որ երբ Արտաշեսի զորավար Սմբատը արշավում է Երվանդի քաղաքի վրա, բռնագրավում է հսկայական ավար. Երվանդի եղբոր՝ Երուազայի գանձերը «... և ծառայս ամենայն հինգ հարիւր, նա և զընտիր ընտիր ոանձուցն ժեհենից՝ բերէ Արտաշիսի»[1]

Մ. Խորենացին Հայկի նահապետական տոհմի բնիկ անդամների կողքին հիշատակում է այլ տոհմերից պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների մասին։ Այդ կարգի գերիներին նա կոչում է ընդոծիններ։

Խորենացին պատմում է, որ Հայկ նահապետը իր տգա Արամանակի ծնվելուց հետո այլևս չէր ցանկանում ենթարկվել Բելին և «... չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իրրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր ազխիւ»:[2]

Ակնհայտ է, որ այս վկայության մեջ հիշատակված ընդոծինները տոհմի իրավահավասար անդամներ չեն, հակառակ դեպքում անիմաստ է դառնում ընդոծինների առանձին հիշատակելու փաստը։ Ընդոծինների առկայությունը տոհմում խիստ արժեքավոր է նաև մի այլ տեսակետից, այն ցույց է տալիս որ տոհմի անդամները արդեն կապված չէին միայն արյունակցական սերտ կապերով։ Ավելին, Արդեն հանդես են գալիս ընդոծիններ, որոնք կամ պատերազմական գերիներ էին կամ թե տոհմի ազատ անդամ՝ կնոջ և գերի ստրուկից ծնված երեխաներ, որոնք ժառանգաբար ստրկացվում էին։ Բացի ընդոծիններից, Խորենացին նշում է Հայկի զորավարների, որդիների, դուստրերի առկայությունը տոհմում, իսկ այս երևույթը խոսում է այն մասին, որ նյութական շերտավորումը և ժառանգական իրավունքը Հայկի տոհմի առանձնահատուկ գծերից մեկն էր։ Տոհմի կարողությունը ժառանգում էին ոչ թե տոհմի հավասար և ազատ անդամները, այլ Հայկի ժառանգները և նրա տգա Արամանակը։ Նյութական և դասային շերտավորման այս փաստերը ցույց են տալիս, որ մեզ մոտ տոհմական կարգերի քայքայման պրոցեսը սկսվել էր դեռ 7—6-րդ դ. դ. (մ. թ. ա.)։

Պատերազմի միջոցով հսկայական քանակի ռազմագերիներ է ձեռք բերում Տիգրան 2-րդը։

Ապպիանոսը նրա գերիների թիվը հաշվում է մոտ 300,000 մարդ։[3] Ապպիանոսի այդ վկայությունը հաստատում է Մ. Խորենացին։[4] Պատերազմի միջոցով գերիների ձեռք բերման բազմաթիվ փաստեր մենք գտնում ենք Փ. Բյուզանդացու,[5] Ղ. Փարպեցու,[6] Եղիշեի[7] և այլ պատմիչների մոտ։ Ոչ միայն մեր հին մատենագիրները, այլև 11-րդ և 12-րդ դ. դ. պատմիչներն ու օրենսգրքերը բազմաթիվ հիշատակություններ են թողել պատերազմական գերիների, նրանց թվի և բաշխման կանոնների մասին։ Ա. Շիրակացին վկայում է, որ «Ներսեհ Կամսարական որդի Արշաւիրի,

[1] Մ. Խորենացի—«Պատմութիւն հայոց», էջ 175։
[2] Մ. Խորենացի, անդ, էջ 33։
[3] App. Mirchr. 67.
[4] Մ. Խորենացի, անդ, էջ 130, 135, 175, 177, 199, 200, 300 և ուր.։
[5] Փ. Բիւզանդացի—«Պատմութ. հայոց», Վենետիկ, 1883 թ., էջ 120—144։
[6] Ղ. Փարպեցի—«Պատմութ. հայոց», Թիֆլիս, 1904 թ., էջ 48—50, 51—66։
[7] Եղիշէ—«Պատմութիւն Վարդանանց», Թիֆլիս, 1913 թ., էջ 61, 127 և ուր.։

անուանակից և Նախնի այսմ Ներսեհի, ի յաղթել պատերազմաւ Ռահլճացն առնու գերի սաստիկ յոյժ. և հասեալ ի դուռն արքունի ընծայեցուցանէ թագաւորին Պարսից գհասարակ գերւոյն. և թունալ գհասարակն՝ ևս ընծայէ որդւոյ տրֆայի գեաւթներորդ մասն. *և հրաժարեալ ի նոցանէ, դառնայ յաշխարհն իւր և եկեալ ի տուն Դարիկպետի՝ յոյժ մեծարի ի նմանէ, ոչ որպէս գնախարար, այլ որպէս գմի ոք ի թագաւորաց.* և սա տայ նմա զուրեբորդ մասն գերւոյն .. *և եկեալ առ սպայապետն...* տայ նմա զչորեքտասաներորդ մասս գերւոյն. *և ես յառաջ եկեալ՝ հասանէ յաշխարհ իւր, և ընդառաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր Հրահատ,* և տայ նմա գերեքտասաներորդ մասն գերւոյ... *և ևս յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատք հայոց* և տայ նոցա զինն ներորդ մասն գերւոյն. *և եկեալ ի Վաղարշապատ՝* տայ ի սուրբ եկեղեցիսն զվեշտասաներորդ մասն գերւոյն. *և եկեալ Սահակ աւագ եղբայր իւր՝* տայ նմա զքսաներորդ մասն գերւոյն. և իր մնաց հինգ հարիւր և եաւթանասուն անձն»:[1] *Ա. Շիրակացու հարցումից և լուծումից պարզվում է, որ Ներսեհ Կամսարականը Հրահատ եղբորը մասհանել է՝ 60, ազատներին՝ 80, Վաղարշապատի եկեղեցուն՝ 40, Սահակ եղբորը՝ 30, իսկ իրեն թողել է 570 գերի։*

Մ. Փոշը իր Դատաստանագրքում վկայում է, որ գերիները թալանված և հափշտակված կայքի հետ բաժին էին հանվում ոչ միայն թագավորին ու հոգևոր դասերին, այլև զորապետներին և զորքին։ Եթե թագավորը անձամբ մասնակցում էր պատերազմին, ստանում էր գերիների կես մասը, իսկ եթե ոչ՝ մեկ տասներորդ մասը։ Պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների $^1/_{10}$—$^1/_{50}$ *մասը մասհանվում էր եկեղեցուն, իսկ մնացած մասը բաժանվում էր զորապետներին և զորքին։ «Բայց ասելի է,* գրում է Փոշը,— զօրինակ բաժանման գերւոյն և աւարին: *Եթէ պատահիցի երթալ յաւար թագաւորի ամենայն զօրօք... և աւար առեալ դարձցի, ոսկի գտեալ յաւարին թագաւորի լիցի* ... և գերւոյն և աւարին կէսն... և տասնորդ իցէ յեկեղեցիս և ի կիսոյն զօրացն... իսկ եթէ չիցէ թագաւոր ընդ զօրս... և ի գերւոյն և յաւարէն տասանորդ թագաւորի. իսկ յեկեղեցիս յիսներորդիցեն»:[2] *Այս երևույթը մենք նկատում ենք նաև արևելյան սլավոնական ցեղերի մոտ։ Հայտնի «Ռուսական Պրավդա»-ի վկայությանը, երբ 1169 թ. Նովգորոդյան աշխարհազորը պարտություն է մատնում սուզդալցիներին, պատերազմական գերիների մի մասը բաժին է հանվում իշխաններին, մի մասը ազատվում է հողին, իսկ մյուս մասը վաճառվում է յուրաքանչյուր գերի երկու նոգատով, այսինքն՝ երեք անգամ էժան քան այծերն ու ոչխարները։*

Հայ իշխող դասերը պատերազմի միջոցով ոչ միայն ձեռք են բերել գերիներ օտար երկրներից, այլև ստրկացրել են իրենց հայրենակիցներին։

«Ստրկությունը, գրում է Էնդելսը,— *որ սկզբում վերաբերվում էր միայն ռազմակերիներին, այժմ հեռանկարներ է բաց անում սեփական ցեղակիցների և մինչև անգամ տոհմակիցների ստրկացման համար։ Ցեղերի հին պատերազմը միմյանց դեմ՝ արդեն այլասերվում է և սիստեմատիկ ավա-*

[1] Ա. Աբրահամյան—«Ա. Շիրակացու մատենագրություն», Երևան, 1944 թ., էջ 230.
[2] Մ. Փոշ—«Դատաստանագիրք», Վաղարշ., 1880 թ., էջ 311—312.
[3] Գրիգ. Բազիլևիչ—«ՍՍՀՄ պատմություն» մասն առաջին, Երևան, 1948 թ., էջ 153.

զակությունն է դառնում ծովի և ցամաքի վրա՝ անասուններ, սարուկներ և գանձեր ձեռք բերելու համար»[1]

Տոհմակիցներին և ցեղակիցներին սարկացնելու փաստեր մենք գրանում ենք նաև հին Հայաստանում։

«Որք զնան և զերեն անասունս և մարդիկ առանց արքունի հրամանաց, ի նոցանն (այսինքն գերիներից—Ս. Հ.) ձգեն յահսորս յոտար աշխարհ...»[2] Դվինի ժողովի կանոնները թույլ են տալիս ազատներին՝ բռնի կերպով սարկացնելու և իրար մեջ բաժանելու իրենց ցեղակիցներին։ «Ցորժամ ազատք զիւրեանց ղերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեան առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի սարկութիւն արկանելոյ։»[3]

բ) Սարկության երկրորդ. ոչ պակաս կարևոր աղբյուրը հանդիսանում էր «սարուկի պտուղը»՝ սարուկից ծնված երեխաները։ Եթե նույնիսկ սարուկը ամուսնանում էր ազատ քաղաքացու հետ, նրանից ծնված երեխաները համարվում էին ժառանգաբար սարուկներ։

Այս երևույթը օրինականացված էր Մ. Գոշի և Ս. Գունդստաբլի դատաստանագրքերում։ Մ. Գոշի դատաստանագրքում սարուկից ծնվածի սարկական վիճակը ձևակերպվել է հետևյալ կերպ. «... Ապա թե տէր իւր տացէ նմա կին և ծնանիցի նմա որդիս և դստերս, կինն և որդիքն տեառնն նոցա եղիցին...»[4] Այդ նույն իմաստն ունի Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի ՃԺէ հոդվածը։ Այս մասին հատուկ կանոններ է պահպանել նաև Ասորա-հռոմեական դատաստանագիրքը։

«Եթէ ծառայ ազատի և Ինայ բնդ իշխանութեամբ տեառն իւրոյ անձնիշխան, և առնու կին յազախնեաց տեառն զկնի ազատութեանն, և ծնանին ի նմանէ որդիս, ոչ ժառանգին զնա որդիք ազախնոյն. այլ ժառանգ լիցի նմա, որ ազատեաց զնա»[5]

Փրկավճարով կարող էր ազատագրվել միայն ինքը՝ սարուկը, իսկ նրա երեխաները մնում էին տիրոջ մոտ՝ որպես նրա սեփականություն։ Մ. Գոշի «Դատաստանագիրքը» իրավունք է տալիս սարուկին՝ «միայն ելիցէ» սարկությունից։

12-րդ դարում «Ռուսական Պրավդա»-ն նույնպես օրինականացրել էր անազատների ժառանգների ժառանգական անազատությունը։ Կիևյան Ռուսիայում անազատներից ծնված երեխաները կոչվում էին «անազատի պտուղներ» և թվարկվում էին տիրոջ շարժական կայքի հետ միասին, ինչպես անասուններից ծնված մատղաշները։

գ) Սարկության կարևոր աղբյուրներից մեկն էլ ռազմական գերիների և սարին դասին պատկանող ծառաների, ազախինների առն ու ծախն էր։ Ահա այդ կարգի մի երկու վկայություններ։ «Եթէ ոք կին յառնէ ելա-

---

[1] Ֆ. Էնգելս—«Ընտանիքի, Ռազմավար սեփականության և պետության ծագումը», Երևան, 1932 թ., էջ 126.

[2] «Ասորա-հռոմեական դատաստանագիրք», հրատ. Ա. Ղանալանի, Վաղարշ., 1917 թ. հոդ. ՃԻԱ, էջ 47։

[3] Ա. Պետիյան—«Ծանոթագիրք հայոց», Թիֆլիս. 1913 թ., էջ 126.

[4] Մ. Գոշ, անդ. էջ 335.

[5] Ասորա հռոմեական դատաստանագիրք, հոդված ԼԵ, էջ 17.

[6] Պրոֆ. Բազիլևիչ, անդ. էջ 153.

Նիցէ, կալցեն և անդրէն յայր իւր տացեն, և մանաւանդ, որ վարձկանօք իցէ վարձեալ և ոչ բոզարար, թէպէտև վաճառեսցի և յաղախնութիւն կալցի...»[1]

Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի մշակված կանոններում մենք կարդում ենք.

«Եղբին ոմանք և զվաշխս դահեկանաց իւրեանց, կեսք վահառեցին բեկերաց իւրեանց, որպես ծառայս, և ոչիչն ետուն վարձանս կանանց իւրեանց ամրարշտեալք ի բռնութեան, անարժանութեամբ անձանաց իւրեանց մեղանչ»[2]

Հովհան Մանդակունու «Վասն փոխաց և վաշխից» ճառում կա հետևյալ դարձվածքը. «... ի ժամ փոխոցն տալոյ զուարթերես կեղծաւորի և յորժամ ժամադրութիւն վաշխիցն հասանիցէ, տեսանելով գչքաւորութիւն և զաարակուսութիւն պարտապանին՝ ոչ ողորմի, և ոչ երդմանն հաւատայ մաղթողին, ոչ խոնարհի յաղաչունս վարանեցելոյն, այլ զժոխեալ անխոնարհելի և անհաշտ։ Եւ իւր ծառայ զփոխառուն եամսրի փոխառուն»[3] Մ. Գոշը վկայում է, որ տերերը մասստյարար վաճառում էին իրենց աղախիններին, իսկ պարտատերերը իրենց գուսարերին։ «Իսկ եթէ պատահի ումեք վաճառել զղուստր իւր ըստ որում և իցէ պատճառի յաղախնութիւն առնն եաւատացելոյ. մի խրբն զաղախին վնռաւ վանառիցէ, զի թէ ոչ իցէ յաչս տեառն իւրոյ հաճոյ որում հաստատեցաւն, փրկեսցէ զնա հայր իւր»[4]

դ) Ստրկության աղբյուրներից է նաև հարկադրաբար ստրկացումը։ Այս եղանակով ստրուկներ ձեռք բերելու իրավունքը օրինակացված էր Շահապիվանի 447 և Դվինի 649 թ. թ. ժողովներում մշակված կանոններում։ Ասողիկ ե Վարդան պատմիչները նկատի ունենալով այդ կանոնների դաժանությունները, այն կոչում են «Տուգանաց կանոնք», կամ «Կանոնք տուգանացք։ Շահապիվանի ժողովում մշակված կանոնները իրավունք են տալիս աղաներին բռնի կերպով ստրկացնելու հանցապարտ շինականներին, ծառաներին, աղախիններին՝ նրանց ուղարկելով հարկադիր աշխատանքների «տուրկանոցներում և «գոդենոցներում»։

Այդ նույն կանոնները թույլ են տալիս տմուսնացած կնոջ նրա վաստարարքի համար «կալցեն... յուրկանոց տարի մի աղասցէ», իսկ «եթէ աղասէ յուրկանոց չերթա ճ դրամ ասցէ գողիանց»։[6] Համաձայն այդ կանոնների ազատ դասին պատկանող մարդիկ իրավունք ունեին բաժանելու ոչ միայն կյանքը. այլև հենց ծառաները, աղախինները։

ե) Ստրկության աղբյուրներից էին նաև նվիրատվությունները։ Ստրուկը, ինչպես բոլոր երկրներում այնպես էլ Հայաստանում տիրոջ լիակատար սեփականությունն էր։ Տերը կարող էր ոչ միայն նրան վաճառել, նվիրել, ծնծել, խեղանդամ դարձնել, այլև սպանել։ Մ. Խորենացին վկայում է, որ նույնիսկ Հայկի նահապետական տոհմում նահապետն իրավունք ուներ ընդծիններին նվիրելու։ Հայկը նվիրում է «... Կադմեայ թա-

[1] Ա. Ղլտնյան. անդ էջ 65, 108, 115 և այլն։
Անդ. էջ 108։
[3] Յովհաննու Մաթղուկաւորոյ հայոց հայրապետի—«Հաւատ», Վենետիկ, 1860, էջ 65—66։
[4] Մ Գոշ. անդ. էջ 336։
Ա. Ղլտնյան. անդ. էջ 64։
[6] Անդ, էջ 126։
[7] Անդ. էջ 64—67։

ուին իւրում բաղում ինչս յանկածէ պատերազմին պարգեւէ, և յիւրոց ընդոծնացն արս անուանիս...»[1]

Ստրուկների մի կատեգորիան հին Հայաստանում կոչվում էր «արքունի ստրուկներ»։ Փ. Բյուզանդացին խոսելով Արշակ 2-րդ թագավորի և Ներսես կաթողիկոսի փոխհարաբերությունների մասին նշում է, որ հայոց թագավորը պաշտոնաթող է անում Ներսեսին և «փոխանակ Ներսիսի դՀունակ ոմն անուն, և կացուցին փոխանակ նորա գլուխ քրիստոնէութեան և էր ստրուկ ի ստրկաց արքունի»։[2]

Ար. Խոստովանողն իր «Վկայք արևելից»-ի մեջ պատմում է, որ երբ Մոգպետը ցանկանում էր ամուսնանալ քրիստոնյա Եզանդուխտի հետ, նրան հրապուրելու համար կարգադրում է. «... տարեալ անցուցանիցեն առ դրաւք ապարանից իւրոց, և ցուցցեն նմա զամենայն արարս նորա, և բազմութիւն ծառայից նորա և զգաւիթանց, զի հանցեն առաջի նորա...»։[3]

Երբ հայ ժողովրդի քաղաքական շահերի դավաճան Վասակ Սյունին ամրաստանվում է Հազկերտ 2-րդի առաջ, պարսկական զորահրամանատար Մուշկան նիսալավուրտն այլ մեղադրանքների հետ միասին կշտամբում է Վասակին. «... թէ որպէս սուտ երդմամբք խարէր և իւուցանէր յամրոցաց անտի. էր զոր կոտորէր, և էր զոր զերի տանէր զծառայս և զգաւխնայս արքունի»։[4] Շահապիվանի ժողովի կանոններում այդ առթիվ մենք կարդում ենք. «ենթէ կին ոք արար և ամուլ պատահեաց, և տյն հանցէ զնա վասն ամլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ անդամին, թէ անասուն, թէ հանդերձ. թէ արծաթ, առնուլ իշխանէ և գնալ»։[5]

Բացի արքունի ստրուկներից, մեր ժամանակագիրները հիշատակում են արքունի մշակների, ոգախինների, ծառաների տարածումը հին Հայաստանում։ Ղ. Փարպեցին և Եղիշեն վկայում են, որ Հազկերտ Բ-ն կտրել է տալիս Աբրահամ Խոստովանողի և Խորեն Երեցի ականջները ու աքսորում է Ասորեստանի Շավուլ գավառը «կալ անգ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի»։[6]

Ընդունել ստրուկների, մշակների, ծառաների, ոգախինների լայն տարածումն հին Հայաստանում, երբեք էլ չի նշանակում, որ ստրկությունը մեզ մոտ հանդես է եկել անտիկ ստրկատիրության իմաստով։ Անտիկ ստրկատիրական հասարակական ֆորմացիայի և ստրկության նահապետական, նախնական ձևերի կլասիկ բնութագիրը տվել են մարքսիզմի կլասիկները։

«Ամենից առաջ,— գրում է Էնգելսը,— որպեսզի ստրկությունը դառնա հնարավոր, անհրաժեշտ է... արտադրության հայտնի աստիճան և մի շարք անհավասարություններ բաշխման գործում։ Այն բանի համար, որպեսզի ստրկության աշխատանքը դառնա սովորական հասարակության համար արտադրության իշխող եղանակ, հասարակությունը պետք է հասնի արտա-

[1] Մ. Խորենացի, անդ, էջ 37։
[2] Փ. Բյուզանդացի «Պատմություն հայոց» ՍՊԲ. 1883 թ. էջ 105
[3] Արբահամ Խոստովանող—«Վկայք Արևելից», աշխատությամբ Գ. Տեր Մկրտչյանի, էջմիածին, 1921 թ., էջ 162։
[4] Ոսկիշ. անդ, էջ 173։
[5] Ա. Ղլտճյան — «Գանձագիրք Հայոց». էջ 64։
[6] Ղ. Փարպեցի, անդ, էջ 106։ Եղիշ. անդ. էջ 219։

դրության զարգացման և առևտրի ու հարստության կուտակման ավելի բարձր աստիճանի։

Նախնադարյան համայնական կարգերում, համայնական հողատիրության պայմաններում ստրկությունը բոլորովին գոյություն չուներ կամ թե խաղում էր ծայրահեղ երկրորդական դեր։ Այսպես էր հին գյուղական քաղաք Հռոմում։ Երբ, ընդհակառակը, Հռոմը հանդես եկավ, որպես «համաշխարհային քաղաք», երբ հողատիրական իրավունքն կենտրոնացավ ավելի ու ավելի հարուստ սեփականատերերի ձեռքը — նրա գյուղացուն բնակիչները դուրս քշվեցին ստրուկ բնակիչների կողմից»։[1]

Էնգելսը մի այլ առիթով գրում է, որ «Աթենքը կործանման դուռը հասցրեց ոչ թե դեմոկրատիան, ինչպես որ պնդում են իշխանների ասալ պոչը պտտացնող եվրոպական վարժապետները, այլ ստրկությունը, որը խլեց աշխատանքը ազատ քաղաքացու ձեռքից»։[2]

Անտիկ ստրկատիրական հասարակություններում ստրուկի աշխատանքը ոչ միայն հանդիսանում էր ամբողջ հասարակության արտադրության հիմքը, այլև ստրկությունն այնտեղ կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը։ Էնգելսը՝ խոսելով աթենական ստրկատիրական հասարակության մասին, գրում է.

«Որ ամենազարգացած շրջանում ամբողջ աթենական ազատ քաղաքացիությունը կանանց և երեխաներն էլ հետը հաշված, բաղկացած էին 90 հազար հոգուց, դրանց կողքին կային 365 հազար երկսեռ ստրուկներ և 45 հազար օրենքի պաշտպանությունը վայելող օտարականներ և ազատ արձակված ստրուկներ։ Հետևաբար յուրաքանչյուր հաստունացած տղամարդ քաղաքացուն ընկնում էր առնվազն 18 ստրուկ և օրենքի պաշտպանությունը վայելող երկու օտարական»։[3]

Անտիկ ստրկատիրական պետություններում ստրկատերերը ձգտում էին ավելի և ավելի մեծ թվով ստրուկներ ձեռք բերել և նրանց օգտագործել որպես բանվորական ուժ, որպես «խոսող գործիքներ»։ Չնայած հին Հունաստանում, Հռոմում ստրկությունը զարգանում էր արտակարգ արագ թափով, սակայն ստրկությունը հին Հունաստանում ուներ այլ նշանակություն, քան ասենք Աթենքում կամ Հռոմում։ Նույնիսկ անտիկ ստրկատիրական հասարակություններում տարբեր կատեգորիայի ստրուկների համար գործ էին ածում բոլորովին տարբեր և սոցիալական այլ նշանակություն ունեցող տերմիններ՝ ἀνδράποδον, δοῦλος, οἰκέτης, οἰκετής, ἕμως, παῖς, θρεπτός, θεράπων, σῶμα և այլն։[4] Ավելին, անտիկ Հունաստանում սոցիալական բոլորովին տարբեր կացության մեջ էին գտնվում, քաղաքական տարբեր իրավունքներ ունեին և արտադրության մեջ այլ դեր էին խաղում պետական ստրուկները՝ հերոդուլները, քան մասնավոր ստրկատերերին պատկանող ստրուկները։ Ավելին, հին Հունաստանում կային նաև իլոտներ, պենեստներ, կլարոտներ և ուրիշները, որոնք ամրացված

[1] Ф. Энгельс — «Анти-Дюринг», 1932 г., стр. 130.142

[2] Ф. Энгельс — «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 142։

[3] Անդ, էջ 141 (բոլոր սեղերում ընդգծումներն իմն են. Ս. Հ.)

[4] Տես «Вестник древней истории», 1947 г., № 1, стр. 3—4.

էին հողին ու կատարում էին գյուղացու աշխատանք։ Անհրաժեշտ է հիշատակել, որ անհիշ ստրկատիրական հասարակություններում աննշան չէր նաև ազատ ու կիսազատ հողագործների թիվը։ Գյուղացիությունն անտիկ հասարակություններում ակտիվորեն մասնակցում էր արիստոկրատական դիկտատուրայի տապալման գործին, պայքարում էր, ստեղծելու համար ստրկատիրական-դեմոկրատական կարգեր։ Գյուղացի բնակչությունն այստեղ խիստ կերպով շահագործվում էր, նրա վրա էին ընկած ռազմական ծանր հարկերը և պարտավորությունները. նա էր, որ ամենից շատ տուժում էր անընդհատ կրկնվող ռազմական արշավանքներից ու պատերազմական գործողություններից։ Ճիշտ է, խոշոր առևտրական պոլիսներ Աթենքում կամ Կորնթոսում գյուղացիության դերը հասարակական կյանքում աննշան էր, սակայն ստրկատիրական խոշոր հողատիրության դուգահեռ և նրա կողքին գոյություն ունեին և շատ կենսունակ էին մանր գյուղացիական տնտեսությունները։ Խոշոր, ստրկատիրական տնտեսությունների և մանր գյուղացիական տնտեսությունների միջև մղված կատաղի պայքարով լի է անտիկ ստրկատիրական հասարակության ամբողջ պատմությունը, սկսած նրա ծագման շրջանից, վերջացրած մինչև նրա անկման ժամանակաշրջանը։ Մարքսը՝ Զասուլիչին գրած իր նամակներից մեկում, անդրադառնալով այդ հարցին գրում է.

«... Ես նորից ձեռնարկեցի հին հռոմեական պատմության ուսումնասիրությանը՝ մինչև Օկտավիոս կայսրի ժամանակաշրջանը։ Ներքին պայքարը կարելի է ամբողջությամբ հանդեցնել մանր ու խոշոր հողատերերի պայքարին, հաշվի առնելով, ի հարկե, այն ձևափոխությունները, որոնք պայմանավորում են ստրկության գոյությունը»[1] Խոշոր ստրկատեր հողատերերի և մանր գյուղացիության սուր պայքարը ավելի ցայտուն արտահայտել է Ֆ. Էնգելսը։

«Հին պատմաբաններից,— գրում է Էնգելսը — միայն Ապպինիոսն է, որը մեզ պարզ և արտահայտիչ ձևով պատմում է, թե հռոմեական կայսրության մեջ ինչի համար էր մղվում պայքարը — այն մղվում էր հողային սեփականության համար»[2]

Մանր հողատեր գյուղացիները և արհեստավորները կարևոր դեր էին խաղում ստրկատիրական հասարակության պատմության մեջ։ Բավական է հիշատակել, որ հասարակական այս խավերի վրա էին ծանրացած և հարկային և զինվորական ծանր ու դաժան պարտավորությունները։

Անտիկ ստրկատիրական հասարակություններում պատերազմներից մեծապես օգուտ էին քաղում խոշոր ստրկատերերը, նրանք էին որ բանակում գրավում էին բարձր պաշտոններ, իրար մեջ բաժանում էին ռազմական ավարը և գերիները։ Այս հսկայական հարստության և էժան բանվորական ուժի շնորհիվ հողատեր-ստրկատերերը ընդարձակում էին իրենց կալվածքները, ստանում էին ավելի ու ավելի արտադրանք և շուկա էին դուրս բերում մեծաքանակ ու էժան հացահատիկ և գյուղատնտեսական այլ մթերքներ։ Մանր գյուղացիական տնտեսությունները բնականաբար, չէին կարողանում դիմանալ այդ կատաղի մրցությանը և տարրալուծվում էին,

[1] *Маркс-Энгельс* — Соч. т. XXII, стр. 89.
[2] *Ф. Энгельс* — „Людвиг Фейербах (см. *Маркс*—Избр. произв. т. I, стр. 353).

քայքայվում, կորցնում էին ոչ միայն արտադրական միջոցները, այլև հողակարը, իսկ քայքայված գյուղացիները ստանում էին ծառայության կամ բանակում կամ թե ստրկատիր հողատիրոջ մոտ։ Մանր արտադրողները, արհեստավորները և գյուղացիները հաճախակի դիմում էին գենքի՝ խոշոր հողատերերի դեմ։ Բասակարգային պայքարի ցայտուն օրինակներից մեկը հանդիսանում են մանր հողատերերի այն շարժումները, որոնք սկսվեցին Հռոմում՝ Գրակքոս եղբայրների առաջնորդությամբ։

Մանր հողատերերի մասսայական քայքայումը և աղքատացումը ստիպում էր խոշոր հողատեր-ստրկատերերին՝ դրամական կապալավարձը փոխարինել նատուրայով։ Ավելին։ Խոշոր ստրկատիրական լատիֆունդիաները, որոնք այլևս մեծ եկամուտներ չէին բերում, բաժանվում էին մանր հողարաժիններին — պարցելներին, որոնք բոնի կերպով տրվում էին քայքայված գյուղացիներին - պայմանով, որ վճարվեն հողատիրոջը բերքի —9/10 մասը։ Պարցելները հաճախ հանձնվում էին նախկին ստրուկներին, ստրուկները ամրացվում էին հողին և կատարում էին գյուղացու աշխատանք։ «Սակայն — ասում է Էնգելսը, — այս մանր հողարաժինները գերազանցապես կոլոններին էին տրվում, որոնք դրա համար տարեկան որոշ եկամուտ էին վճարում, ամրացվում էին հողամասին և·կարող էին իրենց պարցելի հետ վաճառվել։ Թեև նրանք ստրուկներ չէին, բայց ազատ էլ չէին։ Նրանք չէին կարող ազատների հետ ամուսնանալ, իսկ իրար մեջ կնքված ամուսնությունները իրավազոր ամուսնություններ չէին համարվում, այլ միայն միմյանց հետ ապրել (contuberinum), ինչպես որ ստրուկների վերաբերմամբ էին։

Նրանք միջնադարյան ճորտերի նախակարապետներն էին»։

Այսպիսով, ամենաճանաչելի ջնջվում էր կոլոն-գյուղացիների և կոլոն-ստրուկների տարբերությունը, հանդես էր գալիս կոլոնատը — այսինքն ստրկատեր հողատերից կախման վիճակում գրված գյուղացին, հասարակական այն նոր խավը, որը՝ չնայած վարում էր իր ինքնուրույն տնտեսությունը, բայց տալիս էր պարհակներ և կատարում էր հարկադիր կոռային աշխատանք։ Կոլոնատի հանդես գալով, ստրկատիրական հասարակությունում սաղմնավորվում էին ապագա ֆեոդալական կարգերի սաղմերը։ Այս արդեն պատմական այն էպոխան էր, երբ նորից երկրագործությունը հանդես էր գալիս որպես անտիկ ստրկատիրական պետության բնակչության գլխավոր զբաղմունքը և ստրկատիրական անտիկ հասարակությունը ապրում էր իր խորը ճգնաժամը։ «Հնադարյան ստրկությունը,— գրում է Էնգելսը,— իր ժամանակն անց էր կացրել։ Ոչ խոշոր հողագործության մեջ, ոչ էլ քաղաքային մանուֆակտուրայում նա այլևս այնպիսի եկամուտ չէր բերում, որ չարչարանքին արժանանար — նրա արդյունքների վաճառման համար շուկա չկար այլևս»... Ստրկությունն այլևս եկամուտ չէր բերում, դրա համար էլ այն անհետացավ։ Սակայն մնացող ստրկությունը մի թունավոր խայթոց թողեց իբրև հետք— այն, որ ազատներն արհամարհում էին արտադրական աշխատանքը։ Այս մի անել փակուղի էր, որի մեջ ընկել էր հռոմեական աշխարհը. ստրկությունն անկարելի է, տնտեսապես, իսկ ազատների աշխատանքը արհամարհված էր բարոյապես։ Նրանցից մեկը չէր կա-

[1] Էնգելս, նույն տեղում, էջ 180։

բոլ այլևս, իսկ մյուսը չէր կարող դեռևս հասարակական արտադրության հիմնական ձևը լինել։ Այստեղ ոգնության կարող էր հասնել միայն լիակատար ռևոլուցիան»։[1]

«Հին կոչը, νῆς ἀναδασμος — հողի վերաբաժանումը — նորից է դրվում օրակարգում։ Գյուղացիների ռևոլուցիոն շարժումները սկսած III դարից, հատկապես Պելեպոնեսում՝ ստրուկների հետ միասին, դառնում էին կարևոր գործոններ, որոնք որոշում ե ուղղություն էին տալիս հելլենիստական պետությունների քաղաքականությանը»։[2]

Այսպիսով, մարքսիզմի կլասիկների ընորոշմամբ ստրկությունը Արևելքում էականորեն տարբերվում էր անտիկ ստրկատիրական սիստեմից։ Անտիկ ստրկատիրական այնպիսի զարգացած պետություններում, ինչպիսիք էին Հունաստանը ե Հռոմը, ստրկությունը ներկայացնում էր «Արտադրության իշխող ձևը հողագործության, մանուֆակտուրայի ե նավագնացության մեջ...»[3] «Այլ բան է, — ասում է Էնգելսը — տնային ստրկությունը Արևելքում, այստեղ նա ուղղակի կերպով չէր կազմում արտադրության հիմքը, այլ անուղղակի կերպով հանդիսանում էր ընտանիքի բաղկացուցիչ մասը...»[4] Ակնհայտ է, որ Էնգելսը ստրկության ընտանեկան ձևը սերտ կերպով կապում է արևելյան նահապետական ընտանիքի հետ՝ և ստրկության ընտանեկան ձևը համարում է արևելյան նահապետական ընտանիքի անմիջական զարգացման անխուսափելի հետևանքը։ Այնուհետե Մարքսը արևելյան ստրկության տարբերիչ հատկանիշը համարում է «անմիջական կենսական միջոցների արտադրությունը»։[5]

Եվ վերջապես Վ. Ի. Լենինը իր «Լեկցիաներ պետության մասին» աշխատության մեջ խիստ սահմանագիծ է դնում ստրկատիրական հասարակական ֆորմացիայի և ստրկության նահապետական ձևերի մեջ։ Այդ առթիվ Լենինը գրում է. «Հասարակությունը կարող է նահապետական ստրկությունից անցնել ճորտատիրությանը»,[6] իսկ հայտնի է, որ նահապետական ստրկությունը դեռ ստրկատիրական հասարակական ֆորմացիա չէ։

Ակադեմիկոս Բ. Դ. Գրեկովը առաջնորդվելով մարքսիզմի կլասիկների դրույթներով, իր „Крестьяне на Руси" մեծածավալ և գիտական ծանրակշիռ աշխատության մեջ անդրադառնալով անտիկ ստրկատիրության և ստրկատիրության արխայիկ ձևերին, գրում է.

«Հնկայական է տարբերությունը ստրուկների դրության մեջ հռոմեական կայսրությունում և ստրուկների կացության մեջ այսպես կոչված «բարբարոսների» մոտ։ Ստրկությունը Հռոմում արտադրության հիմքն էր. գերմանացիների, սլավոնների, հայերի, բրերների մոտ ստրուկը երբեք չխաղաց և չէր կարող խաղալ այն դերը, որովհետև այդ հասարակությունները զարգացան այլ պայմաններում, այնպիսի պայմաններում, որտեղ արտադրության մեջ սկզբում գլխավոր դերը պատկանում էր ազատ գյուղացու համայնականի աշխատանքին, իսկ հետագայում այդ նույն գյու-

[1] Նույն աեղում, էջ 181—182.
[2] „Вестник древней истории", 1947 г. № 1, стр. 5
[3] *К. Маркс*—„Капитал", т. II, стр 513.
[4] *Энгельс*—„Диалектика природы", изд. VI, стр. 49.
[5] *К. Маркс*—„Капитал" т. III, стр. 360.
[6] *Ленин*—т. XXIV, стр. 367.

գայուն՝ բայց արդեն ճորտացված։ Անտիկ ընթացաշրջանի հետ համեմատած այդ անկասկած մարդկային հասարակության պատմության մեջ առաջադիմական մեծ քայլ է։

Հին Արևելքում, այդ թվում նաև հին Հայաստանում, բնակչության մեծամասնությունը և հիմնական արտադրող դասը հանդիսանում էին ոչ թե ստրուկները, այլ գյուղացի-համայնականը։ Մարքսը խոսելով արևելյան համայնական կարգերի մասին, գրում է. «Ինչպես մանր գյուղացիական տնտեսությունը, այնպես էլ ինքնուրույն մանր արհեստավորների արտադրությունը մասամբ կազմում էր ֆեոդալական արտադրության եղանակի հիմքը, մասամբ էլ նրա քայքայումից հետո շարունակում էր գոյություն ունենալ կապիտալիստական արտադրության կողքին։ Այն ժամանակ նրանք ներկայացնում էին դասային հասարակության տնտեսական հիմքը, նրա գոյության անհամեմատ ավելի ծաղկած շրջանում, այն շրջանում, երբ նախնական արևելյան համայնական տիրապետությունն արդեն քայքայվել էր, իսկ ստրկությունը դեռ չէր կարողացել տիրապետել արտադրության որոշակի աստիճանը»[1]։

Այս է հիմնական պատճառը, որ հին Արևելքում համայնական կարգերի կենսունակության դեպքում ստրկությունը զարգանում էր ծայրահեղ դանդաղ կերպով։ Մարքսիզմի կլասիկները՝ խոսելով անտիկ ստրկության և ստրկության արխայիկ նահապետական ձևերի ու «ասքողված ստրկության» մասին, խիստ սահմանագիծ են դնում նրանց մեջ, ցույց տալով, որ ստրկության արխայիկ նահապետական ձևերը դեռ ստրկատիրական հասարակական ֆորմացիա չեն։

Արդ, ընդունելով, որ հին Հայաստանում արտադրող հիմնական դասը ոչ թե ստրուկն էր, այլ ազատ գյուղացի-համայնականը, բնականաբար հարց է առաջանում, թե հասարակական և պետական ինչպիսի բնույթի աշխատանք էին կատարում այն բազմաթիվ ստրուկները, որոնց մասին մեզ առատ տեղեկություններ են տալիս մեր մատենագիրները։ Այդ անչափ կարևոր հարցի լուծումից շատ բան է կախված։

II

Անտիկ հեղինակները և ազգային մատենագիրները բազմաթիվ վկայություններ են թողել այն մասին, որ պատերազմական գերիները գերադանցապես ամրացվում էին հողին, փոխադրվում էին ագարակները, դաստակերտները, ձեռնակերտները և կատարում էին գյուղացու աշխատանք։ Պատերազմական գերիների մի այլ մասը փոխադրվում էր հասարակական և պետական նշանակություն ունեցող արտադրական ձեռնարկությունները՝ հանքերում, ձկնորսարաններում, արհեստանոցներում, քաղաքային շինարարության, ոռոգման և տնտեսական նշանակություն ունեցող ճանապարհների, ջրանցքների և այլ կառուցման վրա աշխատելու։ Դիմենք այդ վկայություններին։

Մ. Խորենացին վկայում է, որ երբ Արտաշեսը իր զորավար Սմբատին նվիրում է հինգհարյուր գերիներ, Սմբատը «...գնաստյան Երուազայ, զոր գե-

[1] Ак. *Б. Д. Греков*—„Крестьяне на Руси", М. Л. 1946 г., стр. 157

[2] *К. Маркс*—„Капитал" т. I, стр. 251, примечание 24.

բեացն ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ ի թիկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռնակերտն»։[1] *Այս վկայությունը ուշագրավ է նաև այն տեսակետից, որ գերի ծառաները ոչ միայն չեն ստրկացվում, այլ փոխագրվում են Մասիսի թիկունքը՝ ձեռնակերտները և այն կոչում են գերիների նախկին հայրենիքի անունով։ Խորենացին՝ խոսելով Տիգրան Մեծի պատերազմի միջոցով ձեռք բերած գերիների մասին, հիշատակում է, որ նրանք չէին ստրկացվում, այլ փոխադրվում էին ավանները, ագարակները, ձեռնակերտները, դաստակերտները, շենները։ «...թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւնն Հրէից նստուցեալ յԱրմաւիր և յաւանին Վարդգեսի, որ ի վերայ Բասաղ գետոյ»...*[2]

Որ պատերազմական գերիները չէին ստրկացվում, այլ ամրացվում էին հողին և կատարում էին գյուղատն աշխատանք, ցույց են տալիս նաև Խորենացու հետևյալ վկայությունները. «Իսկ Սմբատայ տեղի տուեալ գնաց զկողմամբք Ասորեստանի, իւրովք կամօք թողլով զիշխանութիւն զօրացն Հայոց, ընդ որ խանդայրն Արտաւազդ։ Հրամանաւ Արտաշիսի բընակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Պորզրիք, ի յԱլկի նստուցեալ զքազմութիւն գերեաց»։[3]

Ահա այդ կարգի մեկ վկայություն ևս. «Բայց յետ կարգելոյ զտուն թագաւորին երկրորդ թագաւորութեանն լինէր ի զաւակէ Աժդահակայ, Մարաց եղելոյ թագաւորի, որ այժմ Մուրացեանդ կոչեն։ Բանզի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մուրացւոցն տէր։ Եւ թողու ի վերայ նորա զամենայն շինս, որք ի գերութենէն Մարաց»։[4]

Ակնհայտ է, որ գերիներին փոխադրելով շենները, ավանները, դաստակերտները, օգտագործում են գյուղատնտեսական, երկրագործական աշխատանքներում։ Ահա այդ կարգի մի վկայություն ևս.

«Իսկ զԱնոյշ,—գրում է Խորենացին,—դառաջին կինն Աժդահակայ... հանդերձ պատանեկօք և բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի, քան զբիւր մի, բնակեցուցանէ յարևելեայ ուսոյ մեծի լերինն մինչև ի սահմանս Դողթան, որ են Տամբատ, Ոսկիոզայ, Դաժգոյնք և որ այլք առ եզերք գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանդունիք, մինչև հանգէպ ամրոցին Նախճաւանու. և գերիս աւանն, զՄրաշ և զՋուղայ և զԽորշակունիս, իսկ ի միւս կողմանէ գետոյն. զրոլոր դաշտն... մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու։[5]

III

Արդյոք մեր մատենագիրների մոտ կան համապատասխան վկայություններ, որ ավանները, շենները, դաստակերտները, ձեռնակերտները, ագարակները հանդիսանում էին լատիֆունդիական տիպի, լայն շուկաների հետ կապված և ստրուկի աշխատանքի վրա հիմնված տնտեսություններ։ Այդ կարգի վկայություններ մենք չունենք։ Հնդհակառակը, պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ, որ վերոհիշյալ վայրերը հանդիսանում

[1] Մ. Խորենացի, անդ, էջ 175։
[2] Անդ, էջ 130։
[3] Անդ, էջ 183։
[4] Անդ, էջ 112 (բոլոր ընդգծումներն իմն են—Ս. Հ.)։
[5] Մ. Խորենացի, անդ, էջ 83։

էին տիպիկ գյուղական վայրեր, իսկ նրանց տնտեսությունը հանդիսանում էր նատուրալ։ Շուկայական կապերը կամ բոլորովին բացակայում էին, կամ աննշան էին ու թույլ։ Սկսենք ագարակ բառից։

Ագարակ բառի ճիշտ ստուգաբանությունը տվել է պրոֆ. Սամուելյանը իր վերոհիշյալ հոդվածում։ «Ագարակ բառը,—գրում է նա,—հին սուժերական ծագում ունի, որից գոյացել է նաև հին հունական agros և լատինական ager, որը նշանակում դաշտ, արտ, ընդհանրապես գյուղատնտեսական մշակման հող»։[1] Ակադեմիկոս Հ. Մանանդյանը հիմնականում համաձայն լինելով Ս. Սամուելյանի դրույթին, ավելացնում է նաև «տնատեղ», «ավան» տերմինները։ Աստվածաշնչի մեջ հունական ἀγρός—(դաշտ) կամ ἔπαυλος—տնատեղ (усадьба) բառերը թարգմանված են «ագարակ» տերմինով»։

Ազգային մատենագիրները վկայում են, որ ագարակներ ունեին Արշակունի թագավորները, խոշոր և մանր հողատերերը և նույնիսկ հոգևորականները։ Ագարակներ ունեին նաև հին Հայաստանի քաղաքները և գյուղերը։ Ամեն տեղ, որտեղ մեր մատենագիրները խոսում են ագարակների մասին, այն համարում են տիպիկ գյուղական վայրեր, և ոչ թե լատիֆունդիաներ։ Փ. Բյուզանդացին՝ խոսելով այն մասին, թե ինչպես Օհան եպիսկոպոսը, Փառեն կաթողիկոսի որդին, զբաղվում էր խեղկատակություններով, գրում է, որ իր այդ «ծառայության» դիմաց Հայոց թագավորները «զմուրհակս զրզոց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողին Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեղս և ագարակս ե գանձս յուղտն լինելոյ և գմեղսան բառնալոյ ըստ բանիցն»։[2]

Փավստոսը՝ խոսելով Արիստակես եպիսկոպոսի թաղման ծիսակատարությունների մասին, վկայում է, որ նրա դին տարան «...ի Ծոփաց գաւառէ, և եդին գնա զեկեղեաց գաւառի ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի, հօրն իւրոյ։ Նույն պատմիչի վկայությամբ Ներսես կաթողիկոսի դին «բարձին յաւանէն ի Խաչ գեղջէ... տարան ի Թիլն յաւանն յիւր գեւղն»։[3]

Ղազար Փարպեցին՝ խոսելով Սահակ կաթողիկոսի կտակի մասին, գրում է որ նա «...որոց (Վարդան, Հմայակ և Համազասպ Մամիկոնյաններին. Ս. Հ.) ետ և կնքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զստացուածս գեօղից իւրոց և ագարակաց, և որ ինչ միանգամ էր իւր՝ ետ նոցա ի ժառանգութիւն ե գաւակի նոցա մինչև ցյաւիտեան»։[4]

Ուշագրավ և հետաքրքրական այս վկայությունները մեզ շատ բան են բացատրում։ Այստեղ հիշատակված բոլոր ագարակները, ավանները տիպիկ գյուղական վայրեր էին։

Պատերազմական գերիների մի այլ մասը փոխադրվում և բնակություն էր հաստատում դաստակերտներում, ձեռակերտներում։ «Դաստակերտ սկզբնական ածանցը, գրում է Ս. Սամուելյանը,—գոյացել է ոչ թե dasta

[1] Ս. Սամուելյան, անդ. էջ 110։
[2] А. Маканадян—„Проблема обществ строя дозршакидской Армении", стр 3.
[3] Փ. Բյուզանդացի, անդ. էջ 228։
[4] Անդ. էջ 6, 184։
[5] Ղ. Փարպեցի, անդ. էջ 37։

ձեռք, և կերտ—շինել, կառուցել բառերի ածանցումով, այլ հայ.-իրանական dast – դաշտ բառից։ Ուրեմն «դաստակերտ» (դաշտակերտ) նույն իմաստավորումն է պարունակում ինչ որ «ագարակ» հայկական տերմինը։

Հովհաննն Մամիկոնյանը դաստակերտը կոչում է «աւան», «գեղաւան», «աւանագեղք»։[2]

Մ. Խորենացին «Վասն ձեռնակերտին, որ կոչի Երուանդակերտ» խորագրի տակ ձեռնակերտը նույնացնում է դաստակերտի հետ։

«Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքր Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք... Եւ այսպիսի գեղեցկութեան գիր՝ անքթթելի ին զոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստ դհայեցուածն ունի. և արդարեւ քերրի և թագաւորական դաստակերտն»։[3]

Ագարակներ, դաստակերտներ, ձեռնակերտներ, ավաններ և գյուղեր ունեին նաև նախաքրիստոնեական հեթանոս տաճարները։ Ստրաբոնը խոսելով Կապադովկիայի, Պոնտոսի, Փոքր Ասիայի և Հայաստանի մասին, նշում է, որ այդ երկրներում հեթանոս տաճարները ունեին ընդարձակ կալվածներ, իսկ այդ կալվածները մշակվում էին «տաճարական ծառաների» :ερόδουλο: աշխատանքով։ Ստրաբոնը՝ նկարագրելով Անահիտ դիցուհու հեթանոսական տաճարը, հիշատակում է, որ այդ տաճարի հողերը մշակվում էին ծառաների (δοῦλοι) և աղախինների (δοῦλαι) աշխատանքով։ Ավելին։ Ըստ Ստրաբոնի հերոդուլները ապրում էին տաճարական քաղաքներում, քաղաքատիպ վայրերում, գյուղերում և զբաղվում էին գլխավորապես երկրագործական աշխատանքներով։ Նրանք միայն ենթակա էին թագավորներին և չէին կարող ոչ օտարացվել և ոչ էլ վաճառվել։[4]

Ակադ. Հ. Մանանդյանը բացահայտելով հերոդուլ տերմինի սոցիալական իմաստը, եզրակացնում է, որ «ερόδουλο» տերմինի տակ հարկավոր է ենթադրել ոչ թե տաճարական ստրուկներ, ինչպես սովորաբար ենթադրվում է, այլ տաճարական մարդիկ λαοὶ, որոնց հիմնական մասը հավանական է, կազմում էին կախյալ սերվերիցներ»։[5]

Ստրաբոնի այդ արժեքավոր վկայությունները հաստատում է Ագաթանգեղոսը։ Ագաթանգեղոսը պատմում է այն մասին, թե ինչպես Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Գ. թագավորը քրիստոնյա եկեղեցիներին ու վանքերին տնտեսապես ապահովելու համար ավերում էին հեթանոսական տաճարները, բռնագրավում էին նրանց ընդարձակ կալվածները, շարժական կայքը, ծառաները և նվիրում էին եկեղեցիներին ու վանքերին։ Ավելորդ չենք համարում. վկայակոչելու Ագաթանգեղոսի ընդարձակ տեղեկություններից միայն առանձին հատվածներ. հայոց թագավոր Տրդատ Ր.-ռ. գրում է պատմիչը, «...խաղայր գնացեալ երթայր... հասանէր ի Դարանաղեաց գաւառն... ի գեօղն Թորդան... և զգանձն ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն, աւար հարկանէին... Եւ զգեօղն ամենայն դաստակերտօքն հանդերձ և

[1] Ե. Սամուելյան—«Նդ, էջ 113։
[2] Հովհ. Մամիկոնեան—«Պատմութիւն Տարօնոյ» Երևան. 1941 թ., էջ 111—115։
[3] Խորենացի, «Նդ, էջ 167։
[4] Ստրաբոն, XI—14. 16, XII—2, 3, 33, 37. 537, 557 - 558։
[5] Ա. Մանանդյան, «Նդ, էջ 6։

սահմանօրն յանուն եկեղեցւոյն նուիրեցին... Երբեալ հասաներ յամուր տեղին անուանեալ Անի... ի զատանն տմրակոնալն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրեցին: Եւ զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօրն հանդերձ և նոցին ԳԵՏՆՈՎՔՆ և սահմանօրն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»:[1]

Ակնհայտ է, որ Ագաթանգեղոսը հեթանոսական տաճարների մասին խոսելիս նույնիսկ ակնարկով չի հիշատակում, որ նրանց կալվածքները մշակում էին ստրուկ բնակիչները։ Ագաթանգեղոսը տաճարական կալվածքների վրա աշխատող բնակիչներին կոչում է «սպասավորներ», «տաճարական ծառաներ»։ Հեթանոսական տաճարները ոչ թե ունեցել են լատիֆունդիական տիպի, սարկության աշխատանքի վրա հիմնված տնտեսություններ, այլ ավաններ, դաստակերտներ, ձեռնակերտներ ու գյուղեր։ Հովհան Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնայ» աշխատության մեջ հիշատակում է, որ Աշտիշատի հեթանոսական տաճարը ուներ 12 գյուղ։ «Երբեք հիմնարկեաց սուրբն Գրիգոր զեկեղեցին և եղ անդ զնշխարսն և կանգնեաց զնշան տէրունական խաչին ի տեղիս կոոցն Դիսիանէ և եթող անդ պաշտաւնեայս եկեղեցւոյն զԱնտոն և զկրաւնիդէս։ Եւ զԵպիփան հայր հաստատեաց վանացն ձեռամբ իւրով. և եթող ի տեղւոջն արս կրաւնաւորս ՄԾ և Ռժ դաստակերտս ետ, զի տեղեացն ծառայեսցեն, յորոց մինն Կուառս և Մեղտի և Երեխ և Տումբ և Խորնի, Կեղք և Բաղու։--զի աւանք էին սոքա բազումք և մեծամեծք... Զի Կուառ ունի երդահատարս ԳՌ և Ի՛ժ և հեծեալս ՌԼ և հետևակս ԲՌ և Մ։ Եւ Մեղտի ունի ծուխս ԲՌ և Է հարիւր և հեծեալս ԸՃ և հետևակս ՌԼ։ Եւ Տումբ ծուխս Զ և հեծեալս Ն։ Եւ Խորնի ունի ծուխս ՌՀԶ և հեծեալս Է հարիւր և հետևակս Ռ և Ի։ Իսկ Երեխ ունի ծուխս ԳՌ և ՐՃ և հեծեալս ԻՌ և Ֆ և հետևակս աղեղնաւորս ԸՃ և Ֆ և տիգաւորս Ռ և Զ և պարսաւորս Մ և Զ։ Իսկ Կետեղք երդս Ռ և Ո և հեծեալս ԸՃ և հետևակս Ո, իսկ Բաղու երդս Վ և Մ և հեծեալս Ռ և Ֆ և աղեղնաւորս Պ և Ֆ և տիգաւորս Ո և Զ և պարսաւորս Մ և Զ»։[2]

Նախ նկատենք, որ Հովհան Մամիկոնյանը դժբախտաբար 12 գյուղերից թվարկել է միայն 7 գյուղերի անունները։ Հաժաձայն պատմիչի վկայության Աշտիշատի հեթանոսական տաճարին պատկանող Կուառ ավանն ուներ 3020 ծուխ և պատերազմի դեպքում դուրս էր բերում 1030 հեծյալ և 2200 հետևակ զինվորներ. Մեղտի ավանն ուներ 2700 ծուխ՝ դուրս էր բերում 800 հեծյալ և 1030 հետևակ զինվորներ. Տումբ ավանն ուներ 900 ծուխ՝ դուրս էր բերում 400 հեծյալ զինվորներ. Խորին ավանն ուներ 1086 ծուխ, դուրս էր բերում 700 հեծյալ. 1007 հետևակ զինվորներ, Երեխ ավանն ուներ 3200 ծուխ՝ դուրս էր բերում 2040 հեծյալ, 840 հետևակ—աղեղնավորներ, 1080 տիգավորներ և 280 պարսավորներ. Կեղք ավանն ուներ 1600 ծուխ՝ դուրս էր բերում 800 հեծյալ և 600 հետևակ զինվորներ և վերջապես Բաղու ավանն ուներ 3200 ծուխ, դուրս էր բերում 1040 հեծյալ, 840 աղեղնավոր, 680 տիգավոր և 280 պարսավոր զինվորներ։ Պատմիչն այս բոլոր ավանները կոչում է «բազումք և մեծամեծք», որոնք «ընդարձակեալ ու-

[1] Ագաթանգեղոս—*Պատմութիւն* հայոց, Թիֆլիս, 1914 թ., էջ 397—404։
[2] Հովհ. Մամիկոնեան—«Պատմութիւն Տարօնայ», էջ 110—111։

նէին սոքա իւրեանց խաչնած արօտականս ղղաւառը Հաշտենից», իսկ Մեռոտի ավանը նա կոչում է «քաղաքագեղ»։[1]

Ձեռքի տակ ունենալով հիշյալ 7 գյուղերի երդերի և զինված ուժերի քանակը, դժվար չէ կռահել, որ պատմիչի մոտ հիշատակված Ռացած 5 գյուղերն էլ պետք է որ ունենային երդերի և զինված ուժերի նույն մոտավոր քանակը, ինչ որ հիշատակված մյուս գյուղերը։ Հովհան Մամիկոնյանի վկայության համաձայն 7 ավանը միասին ունեին 15,706 ծուխ, եթե այդ թիվը բաժանենք 7-ի, ապա միջին հաշվով յուրաքանչյուր ավան ուներ 2244 ծուխ, իսկ 12 ավանները միասին ունեին 26,928 ծուխ։ Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր ծուխ միջին հաշվով պետք է ունենար 5—6 անդամ, եթե ոչ ավելին, ապա միայն Աշտիշատի հեթանոսական տաճարի գերիշխանության տակ գտնվում էին ավելի քան 150 հազար գյուղական բնակիչներ։ Թվաբանական նույն հաշիվներով մենք կարող ենք ստանալ մոտավորապես 12 ավանների կողմից պատերազմի դեպքում դուրս բերված զինված ուժերի քանակը։ Հիշատակված 7 գյուղերը պատերազմի դեպքում տալիս էին բոլոր կարգի 15,647 զինվոր. յուրաքանչյուր գյուղ միջին հաշվով դուրս էր բերում 2235 զինվոր, իսկ 12 գյուղերը միասին կարող էին դուրս բերել 26,820 զինվոր։ Պատմիչի այս ուշագրավ և հետաքրքրական վկայությունները մեզ հնարավորություն են տալիս կռահելու, որ աշխարհազորում ծառայող զինվորները չէին կարող ստրուկներ լինել։ Ոչ մի երկրում և ոչ մի բանակում ստրուկները որպես զինվոր չեն ծառայել։ Բացի այդ, հեթանոսական տաճարի բոլոր գյուղերը պատմիչը կոչում է ավաններ, դաստակերտներ։ Հետևաբար Աշտիշատի հեթանոսական տաճարը իր ընդարձակ կալվածքներով, ռազմական հսկայական ուժով հանդիսանում էր ոչ թե լատիֆունդիական տիպի, ստրուկի աշխատանքի վրա հիմնված, լայն չուկաների հետ կապված տնտեսություն, այլ հոգևոր ֆեոդալական տիպի տնտեսություն հիմնված ազատ համայնականի աշխատանքի վրա։ Աշտիշատի հեթանոսական տաճարի ռազմական այդ հսկայական ուժի առկայությունը մեզ երբեք էլ զարմանք չպետք է պատճառի, եթե նկատի առնենք Ագաթանգեղոսի այն վկայությունը, որ Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը երկարատև, դաժան և զինված պայքարի հետևանքով կարողացան խորտակել հեթանոսական տաճարների և՛ ռազմական և տնտեսական հզորությունը։

Որ ազարակները, ավանները, դաստակերտները տիպիկ գյուղական վայրեր էին, այդ մասին մեզ անգնահատելի տեղեկություն է տալիս նաև Ագաթանգեղոսը։ Նրա վկայության համաձայն Տրդատ Գ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը վանքեր և եկեղեցիներ են կառուցում «յամենայն քաղաքս Հայոց և ի գեւղս և յազարակս»։[2]

Աշխարհիկ և հոգևոր հողատիրության զարգացմանը զուգընթացաբար գյուղական համայնքները քայքայվում էին և կորցնում իրենց հողային տիրապետությունը։

Ագաթանգեղոսը այդ մասին պահպանել է խիստ ուշագրավ տեղեկություններ։ Տրդատ Ի ը,—գրում է նա,—«...յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց չորս չորս հողս երդոյ յամենայն ազարակ տեղիս, իսկ յա-

[1] Անդ, էջ 112—113, 1941 թ., էջ 110—112։
[2] Անդ, էջ 422—423։

ւանն եօթն-եօթն հոգս երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»։[1]

Այս վկայությունը ցույց է տալիս, որ ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ ֆեոդալները իրենց հողային տարածությունները ընդարձակում էին գյուղական համայնքների հողերի հաշվին։ Մ. Խորենացին նույնպես վկայում է, որ Տրդատ Դ թագավորից շատ առաջ Արտաշես Ա-ն «հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց. եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս»։[2] Եղիշեն խոսելով Հագկերտ Բ-ի հողային քաղաքականության մասին հիշատակում է, որ նա «...Անբաւ առատութեամբ ագարակս և աւանս միում միում նոցա (նախարարներին — Ս. Հ.) յարքունուստ շնորհէր»։[3]

Այսպիսով, Աղբյուրների ժանրաժան քննությունը մեզ հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ագարակները, դաստակերտները, ավանները, շենները, ձեռնակերտները տիպիկ գյուղական վայրեր էին։ Այստեղ բնակչության ճնշող մեծամասնությունը գյուղական համայնքների ազատ անդամներ գյուղացիներ էին։ Պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների ստվար մասը աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները փոխադրում էին հատկապես գյուղական այդ վայրերը և ամրացնում հողին։ Հողատիրության զարգացման հետևանքով թագավորները, իշխանները և հոգևոր ֆեոդալները իրենց կալվածքները լայնացնում էին համայնական հողատիրության հաշվին։ Այս երևույթը հատուկ էր արևելյան բոլոր երկրներին և բացառություն չէր կարող կազմել միայն Հայաստանի նկատմամբ։ Ակադ. Զավախաշվիլին հիմնվելով Ստրաբոնի՝ Վրաստանի մասին հաղորդած ընդարձակ վկայությունների վրա, համոզիչ կերպով ապացուցեց, որ Վրաստանում նույնպես ստրկությունը արտադրող հիմնական դաս չէր կազմում։ Ըստ Զավախաշվիլու, պատերազմական գերիները ամրացվում էին թագավորական հողերին և աշխատում էին «թագավորական տան» սպառողական կարիքները բավարարելու համար։ Հին Վրաստանում, վկայում է Ստրաբոնը, «բնակվում էին չորս դասեր... չորրորդ դասը կազմված էր հասարակ մարդկանցից, որոնք հանդիսանում էին «թագավորական ստրուկներ» և սպասարկում էին թագավորին նրա կյանքի բոլոր անհրաժեշտ բարիքներով»։

«Վերոհիշյալ վկայությունից երևում է,—եզրափակում է ակադ. Զավախաշվիլին,— որ լայոները Վրաստանում հանդիսանում էին բնակիչների այն խումբը, որոնք ապրում էին թագավորական տոհմին պատկանող հողերի վրա և պարտավոր էին կատարել որոշակի նատուրալ պարտավորություններ։ Նրանց վերագրված կոչումը ցույց է տալիս, որ նրանք պետք է ունեցած լինեն սահմանափակ իրավունքներ, բայց այդ սահմանափակումը լրիվ չէր, ինչպես այդ նկատելի է ստրուկների նկատմամբ. այդ դեպքում, մեծ աշխարհագրիը նրանց ուղղակի կանվաներ դուլոյներ (ստրուկներ) և ոչ թե լայոներ (կախված վիճակում գտնվող գյուղացիներ)»։[5]

[1] Ագաթանգեղոս, անդ, էջ 423։
[2] Մ. Խորենացի, անդ, էջ 186։
[3] Եղիշէ.—անդ, էջ 65։
[4] *Латышев*—„Известия", 140.
[5] *Джавахов*—Государственный строй древней Грузии и Армении, СПБ, 1905 г., стр. 55, 71.

Ակադ. Ջավախաշվիլու այս խիզախ եզրակացությունը ընդունում և զարգացնում է ակադ. Հ. Սանանդյանը։ Նրա կարծիքով լայոյները իրենց սոցիալական և քաղաքական իրավունքներով նման էին ոչ թե ստրուկներին, այլ կոլոնատներին։[1]

Պատերազմական գերիների մի ստվար մասը փոխադրվում էր հասարակական և պետական նշանակություն ունեցող ձեռնարկները, արհեստանոցները, հանքերը, ձկնորսարանները, աշխատում էր կավագործության բնագավառում, քաղաքային շինարարության վրա։ Թովմա Արծրունին վկայում է, որ Արուսեթի որդի Հովսեփը«...Զբնակիչս աշխարհին վարեաց ի գերութիւն... և գկէն գերւոյն ընդ իւրեանց ունենալով ի քաղաքն, լինել իւրեանց ջրկիրս և փայտակոտորս. և չարչարէին զնոսա ի գործս խիստ սաստկասաւոյց ձեռանն դառնութեան և գերծեալքն փախստեաց անգանէին ի կողմանս կողմանս աշխարհացն։»[2]

Հին Հայաստանում լայն չափով տարածված էր ձկնորսարանների ցանցը։ Այստեղ աշխատում էին պատերազմական գերիները։[3] Գերիների մի այլ մասը փոխադրվում էին քաղաքները, աշխատում էին քաղաքային շինարարության վրա։ Աղվանից Թագավոր Ուռնայրը՝ դիմելով իր բանակին, կարգադրում է. «Ցանձն լիցի ձեզ, յիշելով ի ժամանակի՝ իրրև ձերբակալ արասցուք զզօրն Յունաց, զրաղումս ի նոցանէն ապրեցուսցիք, զի կալեալս. կապեալս տարցուք յաղթանս ի գործ կաւագործութեան դազատոս որմաշէնս պիտոյից մերոց քաղաքաց ապարանից և այլոց պիտոյից։»[4]

Պատերազմական գերիները փոխադրվում էին նաև արհեստանոցները, հանքերը, որտեղ նրանք կատարում էին հարկադիր ճրի աշխատանք. «Ստրուկները.—գրում է Էնգելսը,—դադարում են իրենց տերերի պարզ օգնականներ լինելուց. նրանց տանջյալներով դաշտային աշխատանքների էին քշում կամ արհեստանոցները լցնում։»[5]

Այս երևույթը մենք նկատում ենք նաև հին Հայաստանում։ Ղ. Փարպեցին վկայում է այն մասին, թե ինչպես Արշակ Թագավորը Հայաստանի բաժանման հետևանքով թողնում է «Զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն, և զականաւորն». ի միջի այլոց նշում է, որ այնտեղ կային ոսկու, տրծաթի, երկաթի և թանկագին քարերի հանքեր; որոնք «ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծասեալ զարդեօքն յորինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն ի հանդերձսն յոսկէհուս պաճուճեալս ընդելուզանեն»։[6]

Մ. Կաղանկատվացին վկայում է, որ «Առաքեաց (իշխանն հիւսիսոյ) գործակալս ի վերայ ազգի ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկէձնութեան եւ արծաթահալութեան եւ երկաթհանութեան եւ աղնձագործութեան ունէին»։[7] Ահա այս կարգի մի այլ վկայություն ևս։ Նույն պատմիչը գրում է որ «Աստ իմն ակնակաոյց լեալ այրուսիրտն այն և կաթոտն

[1] А. Манандян—„Общественный строй доаршакидской Армении", „Исторические записки„. № 15, 1945 г., стр. 22.

[2] Թ. Ուռբաւելի —«Պատմութիւն տանն Արծրունեաց», ՍՊԲ, 1887 թ., էջ 118.

Փ. Բիւզանդացի, անդ, էջ 17.

[3] Անդ, էջ 102.

[4] Էնգելս — «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 201

[5] Ղ. Փարպեցի, անդ, էջ 9—10.

[6] Մ. Կաղանկատվացի—«Պատմութիւն ազուանից աշխարհի», 1860 թ., էջ 131.

Շամիրամ, հրաման տայ չորից բիւրոց և երկաց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց ե յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յաժենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ եւ երկաթոյ, որք ամենեին կատարեալք իցեն յարուեսագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին»։[1]

Հասկանալի է, որ հիշված հանքերում աշխատում էին ոչ միայն գյուղացիները, շինականները, այլ գերազանցապես պատերազմական գերիները։ Մատենագիրների ժանրամասն հետաքրքրությունը ցույց է տալիս, որ հին Հայաստանում արտադրող հիմնական դասը ոչ թե ստրուկն էր, այլ գյուղական ազատ համայնականը։ Ազգային աղբյուրները որոշակի տարբերություն են դնում ստրուկի, շինականի, ռամիկի, գեղջուկի, ծառայի, աղախնու կատարած պարտավորությունների մեջ և միշտ էլ հիշատակում են հասարակական այս խավերի ստորադաս ու անազատ վիճակը։ Մեր մատենագիրները առանց բացառության ֆեոդալա-վասալական ծառայությունը կոչում են «ի ոպասու ծառայութիւն», իսկ ստրուկների ծառայությունը ի ստրկայ ծառայութիւն կամ «ի ստրկաց կարգի ծառայութիւն»։ Շինականների, ռամիկների հարկային ծառայությունը նրանք որոշակի կերպով տարբերում են ստրուկի ծառայությունից և այն կոչում են «ի հարկի» կամ «ընդ հարկօք ծառայութիւն»։

Հին Արևելքում, այդ թվում նաև հին Հայաստանում ստրկությունը չէր կարող արտադրության հիմքը կազմել նաև այն պարզ պատճառով, որ գյուղական երկրագործական համայնքները այստեղ հանդիսանում էին շատ կենսունակ, պահպանողական և բանվորական ուժի անբավ առատ աղբյուրներ և տարբերվում էին պատերազմական տատանվող և պատահական գերիների հոսանքներից։ Ավելին. գյուղական համայքները, նրանց պահպանողական վարչական ապարատը, հանդիսանում էին մշտական գործող այնպիսի օրգաններ, որոնք կազմակերպում և նպատակահարմար կերպով օգտագործում էին համայնքի անդամների աշխատանքը ոչ միայն համայնքի հողերի, այլև «թագավորական տան», աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին պատկանող հողերի վրա։ «Թագավորական տան» և հողատեր դասերին պատկանող ընդարձակ կալվածների վրա կատարվող հարկադիր աշխատանքը կրում էր կոլեկտիվ աշխատանքի բնույթ, իսկ այդ կոլեկտիվ աշխատանքը կարող էր ապահովել միայն գյուղական երկրագործական համայնքը։ Եթե անտիկ ստրկատիրական հասարակություններում ստրկատերերը ձգտում էին կենտրոնացնելու հնարավորին չափ ավելի ու ավելի ստրուկներ, որպես «խոսող գործիքներ», ապա հին Հայաստանում մենք նկատում ենք բոլորովին հակառակ երևույթ—ոչ թե ստրուկների համակենտրոնացում, այլ նրանցից աղատվելու ձգտում։ Այս էր պատճառը, որ մեզ մոտ իշխող դասերը հպարավոր գերիներ փոխադրում էին աղարակներ, դաստակերտներ կամ նվիրում էին եկեղեցուն և վանքերին։

IV

Քննարկված ժամանակաշրջանում հին Հայաստանի տնտեսական կյանքում քաղաքները գերիշխող դեր չէին խաղում։ Քաղաք-ամրոցը հանդիսանում էր թագավորի, իշխող դասերի վարչա-տնտեսական կենտրոնը։

[1] Անդ։

Քաղաքի և նրա դասերի եկամուտի գլխավոր աղբյուրը ոչ թե առևտուրը, փոխանակությունը, արհեստային արտադրությունն էր, այլ երկրագործությունը, հողագործությունը և անասնապահությունը։

Հին Հայաստանում քաղաքային տնտեսությունը նաստուրալ էր, ապրանքափոխանակությունը պարզ և պրիմիտիվ։ Բննարկված էպոխայում առևտուրն ու արհեստային արտադրությունը դեռ շատ թույլ էին զարգացած։ Աշխատանքի հասարակական երկրորդ խոշոր բաժանումը դեռ իր լիակատար իրավունքի մեջ չէր մտել և ճեղքվածքներ չէր առաջացրել արտադրության հին եղանակի մեջ։ Ոչ թե քաղաքն էր տնտեսապես իշխում գյուղի վրա, այլ գյուղն էր իշխում քաղաքի վրա։ Այդ էր պատճառը, որ մեզ մոտ քաղաքներում չստեղծվեցին լատիֆունդիական տիպի, լայն շուկաների հետ կապված և ստրուկի աշխատանքների վրա հենված անտեսություններ։

Վերոհիշյալ բաղմաթիվ վկայությունների հիման վրա մենք հանգում ենք հետևյալ եզրակացության.

1. Ստրկությունը տարածված և ընդհանուր երեույթ էր հին Հայաստանում։ Բայց նա չզարդացավ, չհասավ անտիկ ստրկության աստիճանին, այլ մնաց «սքողված վիճակում», նախնադարյան, նահապետական, տնային, դոյության անմիջական արդյունքների արտադրության ստադիայում։

2. Հին Հայաստանում ստրուկի աշխատանքը հանդես չեկավ որպես արտադրության իշխող եղանակ ամբողջ հասարակության համար։ Ստրկությունն այստեղ մնաց որպես առանձին կացութաձև (уклад)։

3. Հին Հայաստանում ստրկատերերը ձգտում էին ոչ միայն կենտրոնացնելու ավելի և ավելի մեծ թվով ստրուկներ, այլ ամեն կերպ աշխատում էին ազատվել ստրուկներից, որպես անարատդրող աշխատողների։

4. Պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների հսկայական մեծամասնությանը իշխող դասերը փոխադրում էին ագարակները, գաստակերանները, շենները, ավանները, ձեռնակերտները, քաղաքագյուղերը, քաղաքացիալ ավանները և ամրացնում էին հողին, որտեղ նրանք կատարում էին գյուղացու աշխատանք։

5. Պատերազմական գերիների մի զգալի մասը փոխադրվում էր թագավորական կալվածքները և աշխատում էր «թագավորական տան» սպառողական կարիքները բավարարելու համար։

6. Պատերազմական գերիների մի մասն էլ փոխադրվում էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հողերի վրա և աշխատում էր նրանց սպառողական կարիքները բավարարելու համար։

7. Գերի ստրուկների այն մասը, որ աշխատում էր թագավորական տան կարիքների համար, կոչվում էր մեզ մոտ «արքունի ստրուկներ» կամ «արքունի մշակներ»։ Արքունի ստրուկների կամ արքունի մշակների կազմում մեծ տեղ էին գրավում կանայք, որոնք կոչվում էին աղախիններ։

8. Գերի ստրուկների մի մասն էլ նվիրաբերվում էին հեթանոսական տաճարներին, իսկ հետագայում, քրիստոնեության մուտքից հետո, քրիստոնեական վանքերին ու եկեղեցիներին։ Նրանք աշխատելով տաճարական և վանական ու եկեղեցական կալվածքներում, կոչվում էին «սպասավորներ» կամ «ծառաներ»։

9. Պատերազմական գերիների մի մասն էլ փոխադրվում էր հին Հայաստանի հանքերը, արհեստանոցները, ձկնորսարանները, հաստրակական և պետական նշանակություն ունեցող վայրերը և կատարում էր հարկադիր աշխատանք։

10. Պատերազմական գերիների զգալի մասը փոխադրվում էր քաղաքները և աշխատում էր քաղաքային շինարարության, ռազմական և տնտեսական նշանակություն ունեցող ամրոցների, կառուցումների, ճանապարհների, ջրանցքների և պետական նշանակություն ունեցող շինարարական ձեռնարկների վրա։

11. Քննարկված ժամանակաշրջանում հին Հայաստանի տնտեսությունը նատուրալ էր. արտաքին և ներքին առևտուրն ու արհեստային արտադրությունը գտնվում էր զարգացման պրիմիտիվ աստիճանում։

Այդ է գլխավոր պատճառը, որ հին Հայաստանի քաղաքներում չստեղծվեցին լատիֆունդիական տիպի, լայն շուկաների հետ կապված և ստրուկի աշխատանքի վրա հիմնված տնտեսություններ և սարկությունը մեզ մոտ մնաց գոյության անմիջական միջոցների արտադրության ստաղիայում։

12. Հին Հայաստանում իշխող դասերը ամեն կերպ ձգտում էին ազատագրվելու ստրուկներից, ստրուկի աշխատանքից, որը «ոչ գյուղական տնտեսությունում և ոչ էլ քաղաքային մանուֆակտուրայում այլևս եկամուտ չէր բերում, նույնիսկ չէր արդարացնում ծախսված աշխատանքը»։[1] Հին Հայաստանում ոչ թե ստրուկներն էին կազմում գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը, այլ ազատ համայնական գյուղացին, այն գյուղացին, որը ոչ միայն «պահպանողական տարր էր հանդիսանում, այլ ստեղծագործական ուժ. նա ոչ միայն կառչած էր պապական հին սովորույթներին, այլ պայքարում էր լավագույն կյանքի համար, ստեղծում էր ռեոլուցիոն տրադիցիաներ և ռեոլուցիոն գաղափարախոսության էլեմենտներ»։[2]

[1] *К. Маркс-Энгельс*—Сочинения, т. XVI, часть I, стр. 126.
[2] Вестник древней истории, 1947 г., № 1, стр. 5.